«Այբ կրթական հանգույց» հիմնադրամ
Երևան 0052, Թբիլիսյան խճ. 11/11
Հեռ.՝ +374 60 500 456, +374 98 546 497
welcome@aybschool.am
www.aybschool.am

Արձանագրություն
№ ASBT06-2211-C (0812)

«Այբ կրթական հանգույց» հիմնադրամի 6-րդ գումարման հոգաբարձուների խորհրդի նիստի

Ամսաթիվ՝	08 դեկտեմբերի 2022 թ.
Անցկացման վայր՝	«Այբ» դպրոց, ՀՀ, ք. Երևան, Թբիլիսյան խճուղի 11/11/ Zoom հարթակ
Նիստի սկիզբ՝	09:30

ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ

Հոգաբարձուների խորհրդի (ՀԽ) անդամներ՝
Ռուբեն Հարությունյան - ՀԽ նախագահ, (առցանց),
Աշոտ Մկրտչյան, (առցանց),
Դավիթ Փախչանյան, (առցանց),
Լիլիթ Մինասյան, (առկա),
Ռիմմա Անանյան, (առկա),
Իրինա Գեյկո, (առկա),
Սարգիս Բաղալյան, (առցանց),
Վասկեն Յակուբյան, (առցանց),

Նիստին չեն մասնակցել՝
Արսեն Գալստյան,
Արտավազդ Մինասյան,
Տիգրան Հարությունյան:

Նիստին մասնակցել են հոգաբարձուների խորհրդի տասնմեկ անդամից ութը, ինչն ապահովում է որոշումների կայացման համար անհրաժեշտ քվորումը:
Առանց ձայնի իրավունքի նիստին մասնակցում էին.
Դավիթ Սահակյանը (գործադիր տնօրեն), (առկա),
Հայկ Պողոսյանը (Գործառնական տնօրեն), (առկա), (մասնակցել է հարց 3-ին և 4-ին)
Նելլի Բալայանը (Ֆինանսների կառավարիչ), (առկա), (մասնակցել է հարց 3-ին)
Նարինե Սարգսյանը (խորհրդատու), (առկա), (մասնակցել է հարց 5-ին)
Մերի Հովսեփյանը (Ակադեմիական տնօրեն), (առկա), (մասնակցել է հարց 5-ին, 6-ին, 7-ին և 8-ին)
Գոհար Հովհաննիսյանը (ՄՌԿ բաժնի կառավարիչ), (առկա), (մասնակցել է հարց 10-ին)

Նիստի քարտուղար ընտրվեց Սիրանուշ Սուքիասյանը, (առկա):

Հարց 1. Օրակարգի հաստատում: Հարցեր, որոնք այս օրակարգում ընգրկված չեն եղել: Որոշում՝ հարց 1 *Որոշվեց.* *1. Հաստատել ՀԽ-ի նիստի 2022 թվականի դեկտեմբերի 8-ի օրակարգը:* *2. Ավելացնել հարց 12. «Ayb Startup Accelerator» նախագծի ներկայացում և քննարկում:* *3. Ավելացնել հարց 13. Բ մասնաշենքի սպորտ դահլիճի հովացման համակարգ:* Որոշումը կայացված է միաձայն:
Հարց 2. Նախորդ նիստից անցած ժամանակահատվածում դպրոցի աշխատանքների մասին հակիրճ տեղեկություններ, այդ թվում PDP-ներ:
Հարց 3. 2022-2023 ուսումնական տարվա բյուջեի հաստատում:
Որոշում՝ հարց 3 *Որոշվեց հաստատել 2022-2023 ուսումնական տարվա ճշգրտված բյուջեն (ըստ Հավելված 6-ի):* Որոշումը կայացված է միաձայն:
Հարց 4. Նախնական զինվորական պատրաստության ծրագրի աշխատանքային խմբի զեկույց:
Որոշում՝ հարց 4 *Որոշվեց՝* *1. հավանություն տալ Նախնական զինվորական պատրաստության առարկայի արդյունավետության բարձրացման ծրագրին:* *2. ֆինանսականան հարցերը քննարկել ֆինանսաբյուջետային հանձնաժողովի հետ համատեղ:* Որոշումը կայացված է միաձայն:
Հարց 5. Ծնողների և աշակերտների NSAT և NPS հետազոտությունների արդյունքների ներկայացում:
Որոշում՝ հարց 5 *Որոշվեց ի գիտություն ընդունել NSAT և NPS հետազոտությունների արդյունքները:* Որոշումը կայացված է միաձայն:
Հարց 6. Դպրոցի կամպուսի զարգացման ընթացիկ իրավիճակի հաշվետվությունը և Դպրոցի կամպուսի զարգացման ճանապարհային քարտեզը՝ հիմնական կետերով:
Հարց 7. Գնահատման կարգի փոփոխությունների հաստատում:
Որոշում՝ հարց 7 *Որոշվեց հաստատել Գնահատման կանոնակարգը ըստ Հավելված 10-ի:* Որոշումը կայացված է միաձայն:
Հարց 8. ԴԿԴ-ից (Դիլիջանի կենտրոնական դպրոց), «Այբ» միջին դպրոցից և բաց ընդունելությամբ ընդունված 10-րդ դասարանցիների արդյունքների դինամիկայի վերաբերյալ հաշվետվություն:
Հարց 9. «Այբ» հիմնադրամի և դպրոցի ՀԽ-ների Ընտրության կանոնակարգի վերանայման համատեղ հանձնաժողով ստեղծելու հարց:
Որոշում՝ հարց 9 *Որոշվեց.* *1. ստեղծել ՀԽ-ի Ընտրության կանոնակարգի վերանայման հանձնաժողով, որի անդամներն են՝ Դավիթ Փախչանյանը, Սարգիս Բաղայանը և Դավիթ Սահակյանը:*

2. Հիմնադրամի հանձնաժողովի հետ համատեղ հստակեցնել աշխատանքների ժամկետները՝ հաշվի առնելով, որ գալիք ընտրությունները նախատեսված են 2023թ.-ի հոկտեմբերին: *Որոշումը* կայացված է միաձայն:
Հարց 10. Ուսուցիչների վերապատրաստումների վերաբերյալ հաշվետվություն:
Հարց 11. ՀԽ-ի հանձնարարությունների կատարման հաշվետվություն/ 2021 թվականի սեպտեմբերից սկսած/:
Հարց 12. «Ayb Startup Accelerator» նախագծի ներկայացում և քննարկում:
Որոշում՝ հարց 12 *Որոշվեց դեկտեմբերի 16-ին գումարել խորհրդատվական նիստ և քննարկել հարցը:* Որոշումը կայացված է միաձայն:
Հարց 13. Բ մասնաշենքի սպորտ դահլիճի հովացման համակարգ:
Կետ 14 ՀԽ-ի հաջորդ նիստին առաջարկվող հարցեր: Բոլոր հարցերը ներկայացնել փետրվարի 23-ի նիստին, եթե այլ բան չի նշված հանձնարարության վերաբերյալ:
Կետ 15. Նիստի ավարտ Հանդիպումն ավարտվեց ժամը 12:50-ին:

ՀԽ անդամներ

Աշոտ Մկրտչյան _____

Դավիթ Փախչանյան _____

Լիլիթ Մինասյան _____

Ռիմմա Անանյան _____

Իրինա Գեյկո _____

Սարգիս Բադալյան _____

Վասկեն Յակուբյան _____

ՀԽ նախագահ

Ռուբեն Հարությունյան _____

Նիստի քարտուղար

Սիրանուշ Սուքիասյան _____